ԱՆԴՐԱՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՍԵԿՈՒԼՅԱՐԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՏԱՐԱՏԵՍԱԿ

Սեկուլյարիզմը (աշխարհիկությունը) բարդ, տարաբնույթ և համատարած երևույթ է, որն արտահայտված է ժամանակակից մարդու աշխարհայացքում, մտածելակերպում ու կենսակերպում: Սեկուլյարիզացիոն գործընթացը (աշխարհիկացումը) մարտահարավեր է նետում կրոնին առհասարակ և քրիստոնեությանը մասնավորապես, ինչպես նաև Աստծո իրականությանը ժամանակակից աշխարհում և էլ ավելի խորացնում կրոնի ու կրոնական գիտակցության արդի ճգնաժամը: Սովորաբար, ասելով աշխարհիկ, աշխարհիկություն կամ աշխարհիկացում մարդիկ հասկանում են ինչ որ բան կամ երևույթ, որը հակառակ է կրոնին կամ կրոնականին առհասարակ: Սակայն դա այդպես չէ, եթե անգամ այս միտքը ճիշտ է, ապա՝ մասամբ: Սեկուլյարիզմը ոչ հակառակ է կրոնին, և ոչ էլ հակակրոնական տրամադրվածություն ունի, ինչպես աթեիզմը և կրոնամերժությունը, այլ այլընտրանքային վերաբերմունք է, որն անտեսում է, մարգինալ է դարձնում կրոնը և բացառում այն իր աշխարհայացքային-գաղափարական ու արժեքային համակարգից:

Ժամանակակից մարդու կենսակերպի և մտածելակերպի (մտածողության) ամենակարևոր առանձնահատկություններից մեկն աշխարհիկությունն է, որը գերիշխում է նրա կյանքում: Որպես այդպիսին աշխարհիկությունն աշխարհայացքի տարատեսակ է, որի լույսի ներքո մարդը հասկանում է իրեն և առարկայական աշխարհը, այն կյանքի ուղի է, որով նա ձգտում է ընթանալ իր կյանքում: «Աշխարհիկությունը, - նշում է Գ. Վահանյանը, - կրոնականության ձև է», այն «շրջված և քողարկված կրոնական վերաբերմունք է», որի համար «ներկան և իմմանենտը ծածկված են հավիտենականի և տրանսցենդենտի հատկություններով»[1]: Թեև Վահանյանի տեսակետը վիճահարույց է, այնուամենայնիվ, կարելի է ասել, որ նա այստեղ նկատի չունի, որ աշխարհիկությունն ունի կրոնական բնույթ, այլ զուգահեռ է անցկացնում դրանց միջև և ցույց տալիս, որ երկուսն էլ էականորեն և սկզբունքորեն նույնն են, ինչպես կրոնականությունն է աշխարհայացքային-գաղափարական վերաբերմունք, այնպես էլ՝ աշխարհիկությունը: Սակայն աշխարհիկությունն անկրոնական վերաբերմունք ու գաղափարախո-

սություն է: Աշխարհիկությունը որոշակի կենսափիլիսոփայություն է, որի պրիզմայով մարդը կարողանում է արտահայտել իր վերաբերմունքը մարդու, աշխարհի, կյանքի և իրականության մասին, որտեղ կրոնականն իսպառ բացակայում է, գոյություն չունի:

Դեռ նախնադարյան ժամանակներից մարդը, առաջնորդվելով հիմնականում կրոնական հավատալիքներով ու դիցաբանական պատկերացումներով, իր կյանքի մասին մտածում էր «երկնքի» տեսակետից և հետևաբար այդպիսի կենսակերպ էր վարում: «Երկինքը» կամ «վերին աշխարհը» այն բաղձալի երազանքն էր, որին ձգտում էր հասնել երկրաբնակ մահկանացուն, որի համար այսկողմնային՝ «ժամանակի և տարածության աշխարհը շրջապատված է հավիտենական և տրանսցենդենտ աշխարհով: Կյանքը ժամանակատարածային աշխարհում սկիզբ է առնում, ղեկավարվում և իրականացվում է հավիտենական-տրանսցենդենտ աշխարհի կողմից»[2]: Իսկ կապը այս երկու տարանջատված աշխարհների միջև հաստատվում և իրականացվում է միայն հատուկ միջոցների կողմից և այս «հատուկ միջոցը» կրոնականն է, որը դրսևորվում է կրոնական հեղինակությունների, ինստիտուտների, պաշտամունքային պրակտիկայի և գործունեության միջոցով, որոնք կապ են հաստատում ֆիզիկական և հոգևոր աշխարհների միջև: Հետևապես, մարդը կախյալ վիճակում է գտնվում կրոնից, որով նա առաջնորդվում է իր կյանքում, ստեղծում է կողմնորոշիչ-սկզբունքներ ճշմարտության, բարոյականության և հասարակական կյանքն այս աշխարհում ղեկավարելու համար, իսկ այնկողմնային աշխարհը նրա համար միջոց է հասկանալու և բացատրելու կյանքի առեղծվածը, տնօրինելու իր ճակատագիրը և հաղթահարելու հասարակական կյանքում առկա սոցիալական անարդարությունները:

Այսպիսի աշխարհայացքից, այնկողմնային աշխարհի մասին կրոնական հայացքներից և պատրանքային տեսակետից է փորձում ազատել աշխարհիկությունը մարդուն: Եվ էականն այստեղ ոչ այնքան այդ «երկու-աշխարհ» մտածողության կամ մոդելի մտացածին, ոչ ճիշտ կամ սխալական լինելն է, այլև դրա անհամապատասխանությունը ժամանակակից աշխարհին: Ժամանակակից մարդն իրեն և աշխարհը հասկանալու, իր միջավայրը փոխելու և վերահսկելու, ինչպես նաև իր խնդիրները լուծելու համար գերբնական բացատրությունների, եկեղեցական խնամակալության (հովանավորության) և կրոնական սփոփանքի կարիք չունի: Աշխարհիկությունը մարդու ուշադրությունը կենտրոնացնում է այս աշխարհի, նրանում իր տեղի և դերի, իր հոգսերի և խնդիրների լուծման, աշխարհի նկատմամբ ունեցած իր պատասխանատվության վրա: Այսպիսով, աշխարհիկությունը կամ աշխարհիկացման գործընթացն աստիճա-

նաբար «երկնքից» մտածելը և ապրելը վերածում է այսկողմնային աշխարհի մտածողության և կենսակերպի:

XX դարում տեղի ունեցող, իրենց բնույթով հեղափոխական, սոցիալական փոփոխությունները, կյանքի կոչված գիտության և տեխնոլոգիական զարգացումների կողմից, հնարավորություն տվեցին ժամանակակից մարդուն հասկանալու, թե ինչպես նա կարող է պատմության և հասարակության զոհից[3] վերածվել դրանց կերտողի, ստեղծողի: Ժամանակակից մարդը դաս քաղեց այդ ամենից և հասկացավ, որ կազմակերպված և նպատակամղված ուժերը, գործածված զանգված կերպերով, կարող են կատարել սոցիալական, քաղաքական և տնտեսական փոփոխություններ հասարակության, ինչու չէ նաև պատմության մեջ: Աշխարհիկությունը, ինչպես սահմանում է ամերիկյան բողոքական աստվածաբան Հարվի Քոկսը, նշանակում է «ազատել աշխարհը կրոնական և կեղծ-կրոնական ինքնաբմբռնումից, քանդել փակ աշխարհայացքները, ոչնչացնել բոլոր գերբնական առասպելները և սուրբ սիմվոլները»[4]: Այնուհետև շարունակում է նա, աշխարհիկությունը նշանակում է «ազատել մարդուն կրոնական և մետաֆիզիկական խնամակալությունից, շեղել նրա ուշադրությունը այլ աշխարհներից և կենտրոնացնել դեպի այս աշխարհը»[5]: Կրոնականից ազատագրումը կամ ապակրոնականացումը տեղի ունենում գիտության և տեխնիկայի, քաղաքային (ուրբան) քաղաքակրթության բուռն զարգացմամբ և սոցիալական փոփոխություններով: Ինչպես իրավացիորեն նշում է Քոկսը, «Քաղաքային քաղաքակրթության սկիզբը և ավանդական կրոնի փլուզումը մեր դարաշրջանի երկու կարևոր առանձնահատկություն և սերտորեն կապված շարժում են»[6]:

Աշխարհիկությունը հարվածում է, կամ ավելի ճիշտ, կտրում է «ֆիդեիստական քրիստոնեության պնդումների և բովանդակության արմատները»[7] և որպես գործընթաց աշխարհիկացումն էլ ավելի է նեղացնում մարդկային փորձառության և բնության մեջ տեղի ունեցող երևույթների այն շրջանակը, որի գոյության ու բացատրության համար պահանջվում է Աստված որպես աշխատանքային վարկած: Հետևապես, աշխարհիկացման գործընթացի արդյունքում ժամանակակից մարդն այլևս «վերինի» կարիքը չունի բացատրելու համար թե ինչո՞ւ, ե՞րբ և ինչպե՞ս է տեղի ունենում բնության կամ հասարակության մեջ այս կամ այն երևույթը: Ընդսմին, Աստծո գաղափարը որպես հրաշագործ պրոբլեմ-լուծող և կարիքներ-բավարարող այլևս տեղ չունի մի աշխարհում, որում մարդն ունակ է լուծելու իր խնդիրները, փոփոխելու իր կյանքը և վերահսկելու այն «ներքևից»: Աստծուն սպասելու ժամանակը մոտեցել է իր ավարտին: Աշխարհիկությունը բաց է արել աշխարհի առաջ «մարդկային նախաձեռնության, հնարամտության և պատասխանատվության դուռը»[8],

որպեսզի մարդը կարողանա ինքնիշխան տնօրինել և կառավարել այս աշխարհը, քանի որ հենց քրիստոնեության Սուրբ Գրքում է ասվում, որը մարդը իշխան է այս աշխարհի վրա «և տիրեցեք նրան (այս աշխարհին). և իշխեցեք» (Ծննդ. Ա. 28)[9]:

Աշխարհիկությունը մի գործընթաց է, որն արևմտյան քաղաքակրթության մեջ սկիզբ է առել դեռ Վերածննդի դարաշրջանից և Ռեֆորմացիայից, երբ հասարակական կյանքի ոլորտներն աստիճանաբար ազատագրվում են քրիստոնեական կրոնի և եկեղեցու, կղերականի, աստվածաբանության ու կրոնական գաղափարախոսության վերահսկողությունից ու ազդեցությունից: Աշխարհիկացման գործընթացում կարևոր դեր են խաղացել «հավատի և գիտության, եկեղեցու և պետության, կրոնական իդեալների և ռեալ պրակտիկայի միջև առկա հակասությունները, ինչպես նաև եկեղեցու հետ կապի թուլացման և հավատի աղբյուրների նկատմամբ քննադատական մոտեցման»[10] գործոններն ու հանգամանքները, որոնք ակնհայտ էին դարձել սկսած XIV-XV դարերից: Իսկ դա հենց այն ժամանակաշրջանն է, երբ արևմտյան քաղաքակրթության մեջ տեղի են ունենում սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային և հոգևոր-գաղափարական փոփոխություններ, որոնք նպաստում են ֆեոդալական հասարակարգի խորտակմանը և նոր՝ կապիտալիստական հասարակարգի առաջացմանը և կազմավորմանը: Այս փոփոխությունները, բնականաբար, պիտի արագացնեին աշխարհիկացման գործընթացը Եվրոպայում և թուլացնեին կրոնի հիմքերն ու ազդեցության ոլորտները հասարակության մեջ: Այսպիսով, աշխարհիկացումը գործընթաց է, որի միջոցով կրոնի մեջ ներթափանցում են ոչ-կրոնական կամ անկրոնական կառուցվածքներ և տարրեր, որոնք ջնջում են սահմանը կրոնականի և ոչ-կրոնականի, կրոնական և ոչ-կրոնական կյանքի միջև: Տեղի է ունենում աշխարհի դեսակրալիզացիա, այն է՝ ապասրբազնայնացում, որը նշանակում է «հավատալիքների և աշխարհընթացման փոխանցում կրոնական ոլորտից դեպի ոչ-կրոնականը»[11]:

Պետք է ընդունել այն փաստը, որ քրիստոնեությունն ի սկզբանե եղել է «էականորեն վիճահարույց հասկացություն», քանի որ ինքնանույնականացման (իդենտիֆիկացիայի) մասին Հիսուսի հետևորդների բախումները հրեականության և հունահռոմեական մշակույթի շրջանակում ծագել են հենց նրա սկզբնավորման պահից[12]: Իր հասարակական գործունեության առաջին իսկ օրից Հիսուս Քրիստոսը, այնուհետև նաև նրա հետևորդները, բախման, պայքարի մեջ են մտել իշխող կրոնական համակարգերի ուսմունքի ու գաղափարախոսության, բարոյական նորմերի ու իդեալների հետ և առաջարկել այլ ուսմունք և գաղափարախոսություն, բարոյական այլ սկզբունքներ ու իդեալներ:

Իսկ ապրել քրիստոնեական սկզբունքներով և իդեալներով այն դեպքում, երբ քրիստոնեությունը համարվում էր հրեական աղանդ, կարող էին շատ քչերը, այն է՝ այսպես կոչված «ընտրյալները»:

Ինքը քրիստոնեությունն անմասն չէ աշխարհիկացման գործընթացի առաջացման հարցում: Իր հիմնադրման օրից քրիստոնեությունն ունեցել է հակասոցիալական և հակաաշխարհային բնույթ: Քրիստոսը տարբեր առիթներով իր և իր աշակերտների մասին ընդգծել է իրենց ոչ-այս-աշխարհից լինելը «որովհետև աշխարհից չեն, ինչպես ես էլ աշխարհից չեմ» (Հովհ. Ժէ 14)[13]: Հենց սկզբնավորման պահից նկատվում է քրիստոնեական կրոնի և քրիստոնյաների կողմից աշխարհամերժողական միտումը և վերաբերմունքն այս աշխարհի՝ որպես բացասական երևույթի, նկատմամբ: Այս աշխարհը և քրիստոնեությունը հակադիր, դիմադարձ բևեռներ են, որոնք այս ռեալության մեջ իրարամերժ երևույթ են: Այս աշխարհն անընդունելի է քրիստոնյայի համար, քանի որ այն չընդունեց, մերժեց Հիսուս Քրիստոսին, որովհետև այս աշխարհն ամեն տեսակ չարի և բացասականի մարմնավորում է և որի իշխանը սատանան է: Հետևաբար քրիստոնյան պետք է հեռու մնա այս աշխարհից, մերժի աշխարհն ու այն ամենը, ինչ աշխարհն է առաջարկում, ինչպես նաև կտրված լինի նրանից: Քրիստոնյային չպետք է անհանգստացնի աշխարհի բարեկեցության, իր սոցիալ-մշակութային միջավայրը զարգացնելու հարցը, այլ նա պետք է մեկուսացվի այս աշխարհից և մտածի այնկողմնային աշխարհ մտնելու մասին, որտեղ նա կարող է երջանիկ կյանքով ապրել իր Տիրոջ՝ Քրիստոսի հետ, և լինել երանության մեջ:

Այսպիսի արհամարհական և մերժողական վերաբերմունքն այս աշխարհի նկատմամբ շատ ավելի բնորոշ է աղանդին, իսկ քրիստոնեությունը հրեականության աղանդ էր, որին բնորոշ էին հրեական ապոկալիպտիկ տարրերը, որոնք էլ ձևավորում էին այսպիսի աշխարհամերժողական վերաբերմունքը: Ոչ ասել կյանքի՛ն, աշխարհի՛ն, սա է քրիստոնեության պատասխանը, «հավատամքը» այս աշխարհի հանդեպ: Այսպիսի աշխարհատեսողության պատճառով էր, որ IV դարից սկսվեցին լայն տարածում ունենալ ճգնավորական շարժումները և ճգնավորական կենտրոնների ստեղծումը քրիստոնեության մեջ, որոնք արտահայտում էին քրիստոնյաների վերաբերմունքն այս աշխարհի, կյանքի, հասարակական կյանքի և սոցիալական միջավայրի նկատմամբ և իրենց «ոչ»-ն էին ասում նման կեցվածքով և վերաբերմունքով: Այս առիթով ճիշտ բնութագրություն է տվել Բերդյաևը՝ նշելով, որ «Քրիստոնեության մեջ չկար հասարակության դրական կրոնական իդեալ և սրբերի ճգնավորական սխրանքը կարծես թե անտագոնիկական (անհաշտելի) էր այս խնդրի ձևակերպ-

ման համար: Դրա համար Երկնայինի և երկրայինի, կրոնականի և աշխարհայինի դուալիզմը դարձավ քրիստոնեության պատմության խրոնիկական հիվանդությունը»[14]:

Արևմտյան միջնադարյան քրիստոնեությունը փորձեց, քրիստոնեականացնելով Եվրոպան, լուծել այս հիմնահարցը: Եթե բոլորը քրիստոնյա են, ապա կստեղծվի «քրիստոնեական պետություն», որի նպատակը կլինի հիմնադրել «Աստծո թագավորությունը» այս աշխարհում: Սակայն մասսայական քրիստոնեականացումը մարդկանց չդարձրեց ճշմարիտ, աստվածաշնչյան իմաստով քրիստոնյաներ, ավելին, «քրիստոնեական պետությունը», որին թվաց, թե աշխարհն ընդունել է քրիստոնեությունը և քրիստոնեությունն է իշխում աշխարհի վրա, պարզապես սխալվեց իր հաշվարկներում կամ էլ ինքնախաբեությամբ զբաղվեց, քանի որ, ֆորմալ քրիստոնեականացնելով Եվրոպան, քրիստոնեությունը կնքեց իր համար շատ վտանգավոր «պատմական գործարք հեթանոսության հետ»[15]: Ճիշտ է բնութագրել Արենդ վան Լիուվենը՝ նշելով, որ «Քրիստոնեականացումը մի գործընթաց է, որն ուշ թե շուտ հարկադրված է ընդդիմանալու ինքն իրեն»[16]: Իրականում «քրիստոնեական պետությունը» ոչ թե քրիստոնեական էր, այլև ոչ-քրիստոնյաների պետություն էր, «պետությունն հեթանոսական ծագումով և միայն հեթանոսների համար»[17]: Հենց «քրիստոնեական պետությունն» էլ դարձավ քրիստոնեության ձախողման պատճառը, որովհետև եթե քրիստոնեությունն իր բնույթով հակասոցիալական և հակաաշխարհային էր, ապա ինչու քրիստոնեությունը ձգտեց ունենալ պետություն *այս* աշխարհում, որն աշխարհիկ կառավարման ձև էր և դա այն դեպքում, երբ Քրիստոս այս առիթով հստակ արտահայտել էր իր դիրքորոշումը, որ «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ» (Հովհ. ԺԸ 36)[18]: Միթե քրիստոնյաները մոռացել էին իրենց Տիրոջ այս պատվերը, ինչու քրիստոնեությունը մասսայաբար քրիստոնեականացրեց Արևմուտքը և ոչ միայն Արևմուտքը՝ շատ լավ գիտակցելով, որ մասսայական «դարձի գալը» մարդկանց դեռ քրիստոնյա չի դարձնում: Միթե քրիստոնյաները չհասկացան, որ մարդկային հոծ բազմությունների մակերեսային մակարդակով ներթափանցումը քրիստոնեության մեջ չի կարող փոխել նրանց մասսայական հեթանոսական գիտակցությունը. ավելին, դրանով քրիստոնեությունը պարզապես հեթանոսականացվեց և լուրջ զիջումների գնաց այս աշխարհի հետ:

Արդյունքում, քրիստոնեությունը, որն աշխարհի նկատմամբ ուներ մերժողական և արհամարհական վերաբերմունք, այն է՝ «ոչ մի ընդհանուր բան» չէր կարող լինել քրիստոնեության և աշխարհի միջև, քրիստոնեությունը ասել էր «ոչ» աշխարհին և այս կյանքին, ընդունում է աշխարհիկ ղեկավարման ձևը,

աշխարհիկ կարգերը, աշխարհիկ մտածողությունը և աստիճանաբար իր ուշադրությունը կենտրոնացնում է «Երկնքի արքայությունից» դեպի երկրային, աշխարհիկ պետության վրա, փոխում է իր իդեալները երկնայինից դեպի երկրայինը: Քրիստոնեությունը պարզապես աշխարհիկանում է, չնայած որ պահպանում է իր սկզբնական ուսմունքի դրույթներն ու առանձնահատկությունները: Այսպիսով, մի կողմից քրիստոնեության ներքին բախումներն ու խնդիրներն աշխարհի հետ, նրա ինքնամեկուսացման միտումները և մյուս կողմից նրա ներսում իրականացվող աշխարհիկացման գործընթացը նպաստեցին աշխարհիկության՝ որպես բազմաբնույթ և բարդ երևույթի, առաջացմանը, որը դարձավ այլընտրանքային աշխարհայացք, մտածելակերպ ու կենսակերպ արևմտյան այսպես կոչված քրիստոնեական երկրներում և աստիճանաբար նպաստավոր միջավայր ստեղծեց, որպեսզի քրիստոնեությունը դառնա մարգինալ[19] երևույթ հասարակական կյանքի զանազան ոլորտներում:

Հունահռոմեական քաղաքակրթության և մշակույթի մեջ, որի ժառանգորդը Արևմտյան քաղաքակրթությունը և մշակույթն է, քրիստոնեության սկզբնավորումով տեղի ունեցան հեթանոսական կրոնների կործանումը և բնության ապաաստվածացման ու ապածիսականացման գործընթացը, որը մեծ նշանակություն ուներ հեթանոսական կրոնների համակարգում: Սա պատճառ հանդիսացավ հեթանոսական կրոնների կործանման, հին կրոնը նորով փոխարինվելու և հռոմեական կայսրության մեջ քրիստոնեության դիրքերի ամրապնդման ու, այնուհետև, նրա լիարժեք որպես կայսերական պետական կրոն հաստատման համար: Քրիստոնեական կրոնը և եկեղեցին փորձեցին ազատել աշխարհը հեթանոսական կրոնական հավատալիքներից, դրանց ազդեցությունից ու տիրապետությունից: Այնուամենայնիվ, աշխարհիկացնելով կամ ապակրոնականացնելով հեթանոսական կրոնները, քրիստոնեությունը չազատագրեց աշխարհը կրոնական խնամակալությունից և տիրապետությունից, այլ հեթանոսությունը փոխարինեց մեկ այլ կրոնական գաղափարախոսությամբ և տիրապետությամբ, այն է՝ «քրիստոնեական ձևով»[20]:

Հետևապես, արևմտյան աշխարհի համար սկսեց նոր կրոնի՝ քրիստոնեության ժամանակաշրջանը: Եթե քրիստոնեությունն ազատագրեց արևմտյան աշխարհը հեթանոսական աստվածների տիրապետությունից, ապա դա դեռ չի նշանակում, որ նա լիովին ապակրոնականացրեց (աշխարհիկացրեց) այս աշխարհը: Բնավ ոչ: Քրիստոնեությունն ազատագրեց, որպեսզի իր տիրապետությունը հաստատի աշխարհի նկատմամբ, ստրկացնի աշխարհը կրոնական խնամակալության մեկ այլ ձևով: Սակայն, ինչպես ցանկացած քաղաքակրթություն, գաղափարախոսություն ունի իր ծագման, զարգացման և կործանման

համար սկիզբ ու վերջ, այնպես էլ քրիստոնեական կրոնն իր ուսմունքի և գաղափարախոսության վերաբերյալ հարցերում, արևմտյան քաղաքակրթության և մշակույթի համատեքստում աշխարհի հետ ունեցած իր բախումների արդյունքում (պատճառով), նպաստեց այնպիսի մի երևույթի առաջացմանը, որը փլուզեց քրիստոնեության հիմքերը, արմատախիլ արեց նրա արմատները և գերեզման փորեց նրա համար: Այս գործընթացն աշխարհիկացումն է, քրիստոնեության գուցե ամենավտանգավոր թշնամին, ավելի վտանգավոր քան գիտական աթեիզմը կամ կրոնամերժությունը, քանի որ այն հակառակ չէ քրիստոնեությանը, նրա ուսմունքին և գաղափարախոսությանը, այլև առաջարկում է այլ աշխարհայացքային, գաղափարական և արժեքաբանական համակարգ, որը մերժողական տրամադրություն չունի քրիստոնեության բովանդակության նկատմամբ, սակայն ունի կրոնականն անտեսելու, մարգինալ դարձնելու մտադրություն:

Մեր ժամանակին բնորոշ է կրոնական հավատի աճող արժեզրկումը և անկումը, որը ոչ միայն տեսական-ռացիոնալ մտածողության ուսումնասիրության առարկա է, ինչը գիտակցում են նաև աստվածաբանները, քանի որ աշխարհիկացումը թափանցել է նաև աստվածաբանական մտածողության մեջ, այլև աշխարհիկացումը դարձել է մասսայական գիտակցություն և մարդկանց կենսակերպ. այն տեսական մտածողության ոլորտից անցել է պրակտիկ գործունեության ոլորտ: Իսկ սա նշանակում է, որ կրոնի և կրոնական գիտակցության ճգնաժամն էլ ավելի կխորանա, քանի որ հասարակական կյանքի տարբեր ոլորտները՝ կրթությունը, քաղաքականությունը, իրավունքը, մշակույթը, գրականությունը, բարոյականությունը, արվեստը, փիլիսոփայությունը, գիտության զանազան բնագավառները, մարդկանց գիտակցությունը, վերաբերմունքն ու վարքը, անգամ նրանց առօրյան ու կենցաղը ազատագրվում են կրոնականի վերահսկողությունից և դրան զուգահեռ զարգանում է համատարած անտարբերությունը կրոնի նկատմամբ: Ինչպես նշում է կաթոլիկ անվանի աստվածաբան Հանս Ուրս ֆոն Վալտասարը՝ «Կրոնն անհետանում է հասարակական կյանքից, եթե այն դեռ հիշատակվում է, ապա դա արվում է այնպիսի ձևով, որ կարծես թե այն գրեթե մի բան է, որից պետք է ամաչել»[21]:

Սակայն սա դեռ չի նշանակում, որ կրոնն այլևս ազդեցիկ չէ կամ չի գործում հասարակության մեջ: Աշխարհիկացումը բավականին բարդ երևույթ և գործընթաց է, քանի որ դրան զուգահեռ զարգանում է նաև կրոնականությունը կամ կրոնապաշտությունը, որը դրսևորվեց XX դարի 30-ականներին և հատկապես XX դարի 50-ականներին, երբ II աշխարհամարտից հետո ԱՄՆ-ում տեղի ունեցավ հետպատերազմյան այսպես կոչված «կրոնական բումը»,

կրոնական վերազարթոնքը, որին բնորոշ էր յուրահատուկ կրոնականությունը ընդգծված սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային, հոգևոր-գաղափարական իմմանենտ կողմնորոշմամբ: Բացի այդ, այն յուրակերպ դրսևորում ունեցավ և շարունակում է ունենալ Խորհրդային Միության փլուզումից հետո նախկին խորհրդային հանրապետություններում արտահայտված ազգային-էթնիկական ու մշակութային առանձնահատկություններով: Այս ծնական կրոնականությունն արտաքին կրոնապաշտություն է (ոչ թե աստվածապաշտություն), հավատ է հանուն հավատի, «մշակութային» կրոն է, սոցիալական երևույթ ու սովորույթի ուժ, ազգային-քաղաքացիական պարտքի կատարում: Ժամանակակից մարդը «պաշտում է Աստծուն առանց Աստծո»[22], ինչը նոր կրոնականության ձև կամ դրսևորում է, երբ մարդը քրիստոնյա է, բայց ոչ հավատացյալ: Դա պարզապես նշանակում է հավատալ հանուն հավատալու, երբ միջոցը վերածվում է նպատակի: Կրոնապաշտության ժամանակակից դրսևորումները զուտ արտաքին բնույթ են կրում, բայց իրականում դրանք ներքուստ բովանդակազրկված են ու դատարկ՝ կորցրած սրբազնայինը, նումինոզնայինն ու տրանսցենդենտականը կրոնականի մեջ: Նման կրոնականությունը կրոնը վերածում է մոգության և տալիս նրան ինչ որ իմմանենտական նշանակություն:

Կրոնի արդի ճգնաժամի կարևոր առանձնահատկությունը «հետևանք է սոցիալական անդառնալի փոփոխությունների, որոնք անհրաժեշտաբար փլուզում են կրոնի սոցիալական հիմքերը»[23]: Արդի մարդը չի ցանկանում ապրել պատրանքներով, այն սկզբունքներով և իդեալներով, որը սովորեցնում է քրիստոնեությունը: Նա կամենում է ապրել այս աշխարհում, այսկողմնային ռեալ իրականությունում և որևէ ցանկություն չունի հանդերձյալ կյանքի, այնկողմնային աշխարհի նկատմամբ: Հետևապես, ժամանակակից աշխարհում հասարակության ապակրոնականացումը, այն է՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտների ու հասարակական գիտակցության ձևերի ազատագրումը կրոնի և եկեղեցու ազդեցությունից և վերահսկողությունից հանդիսանում է կրոնի ճգնաժամի վառ ապացույց: Մի կողմից աշխարհիկացումը կրոնի ճգնաժամի առաջացման պատճառ է, իսկ մյուս կողմից, կրոնի հատկապես ներքին ճգնաճամն էլ ավելի է խորացնում ապակրոնականացման՝ աշխարհիկացման գործընթացը ժամանակակից աշխարհում:

Այսպիսով, աշխարհիկությունը կյանքի փիլիսոփայություն է, աշխարհայացքի տարատեսակ, որոշակի մտածողություն ու կենսակերպ, ժամանակակից մարդու գիտակցության մեջ որակական փոխակերպություն: Աշխարհիկությունն իրատեսական վերաբերմունք ու տեսակետ է այս աշխարհի, դրանում մարդու տեղի ու դերի, նրա կյանքի իմաստի ու իրականության վերաբերյալ ի

տարբերություն կրոնականի, որն ավելի շուտ անիրական է, եթե չասենք, որ որոշ դեպքերում նաև պատրանքային է: Որպես աշխարհայացքային-կողմնորոշիչ վերաբերմունք աշխարհիկությունն ավելի նախընտրելի է, քան կրոնական աշխարհայացքը, որն արդի շրջանում ընկել է ճգնաժամի մեջ և չի կարողանում դուրս գալ այդ վիճակից: Ահա թե ինչու աշխարհիկացումն այդքան համատարած է աշխարհում և մարդկանց գիտակցության մեջ, անգամ հավատացյալների մտածողության ու կենսակերպի մեջ, հավատացյալներ, որոնք պնդում են, որ կրոնական են, սակայն ապրում են ինչպես աշխարհիկ մարդիկ, կրոնականներ, որոնք դավանում են այս կամ այն կրոնը կամ դավանանքը, հավատում են Աստծուն, սակայն իրականում գործնական ու մշակութային աթեիստներ են: Սա մի պարադոքս է՝ իրական ու ապշեցնող պարադոքս:

---

[1] **Gabriel Vahanian.** The Death of God: the Culture of Our Post-Christian Era, New York: George Braziller, 1961, p. 67.

[2] **Lonnie D. Kliever and John H. Hayes.** Radical Christianity: The New Theologies in Perspective, Droke House, 1968, p. 33.

[3] Նույն տեղում, էջ 34:

[4] **Harvey Cox.** The Secular City. Secularization and Urbanization in Theological Perspective, New York: The Macmillan Company, 1966, p. 2.

[5] Նույն տեղում, էջ 17:

[6] Նույն տեղում, էջ 1:

[7] **Lonnie D. Kliever and John H. Hayes.** Radical Christianity, p. 35.

[8] Նույն տեղում, էջ 35:

[9] **Աստվածաշունչ. Մատյան Հին և Նոր Կտակարանների,** Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, 1998:

[10] **Антон Хаутепен.** Бог: открытый вопрос. Богословские перспективы современной культуры. М.: Библейско-богословский институт св. апостола Андрея. 2008, с. 38.

[11] **Н. С. Юлина.** Теология и философия в религиозной мысли США XX века. М.: Наука. 1986, с. 30.

[12] **Антон Хаутепен.** Бог: открытый вопрос, с. 38-39.

[13] **Աստվածաշունչ, Մատյան Հին և Նոր Կտակարանների:**

[14] **Николай Бердяев.** Философия свободы. М.: АСТ. 2005, с. 212.

[15] Նույն տեղում, էջ 214:

[16] **Arend Th. van Leeuwen.** Christianity in World History: Meeting of the Faiths of East and West, New York: Charles Scribner's Sons, 1964, p. 332.

[17] **Николай Бердяев.** Философия свободы. с. 214.

[18] **Աստվածաշունչ, Մատյան Հին և Նոր Կտակարանների:**

[19] Այս մասին տես **Gabriel Vahanian.** Praise of the Secular, Charlottesville and London: University of Virginia Press, 2008, pp. xiv-xv.

[20] **Arend Th. van Leeuwen.** Christianity in World History, p. 332.

[21] **Hans Urs Von Balthasar.** The God Question and Modern Man, New York: The Seabury Press, 1967, p. 75.

[22] **Gabriel Vahanian.** God Without God, "The Christian Century," Vol. LXXXII, No 23, June 9, 1965, p. 745.

[23] **В. И. Добреньков.** Современный протестантский теологический модернизм в США: Его замыслы и результаты. М.: Издательство Московского университета. 1980, с. 6.